ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների թագավորության դեսպանատան աջակցությամբ իրականացվող՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում

ԵՐԵՎԱՆ 2024

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՎԵՐՑՎԱԾ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 3

2. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 4

3. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ 6

4. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՐՁԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ 7

5.ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ.....9

6. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ 10

6.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ.....10

6.2. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԾՆՈՂՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ՉԵՆ 12

6.3. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ.....12

6.4. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ 14

6.5. ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԾՆՈՂՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՉԵՆ.....15

6.6. ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ (ԵԹԵ ԾՆՈՂՆԵՐԸ ՄԱՀԱՑԱԾ ԵՆ ԿԱՄ ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ) ԵՐԵԽԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ.....15

7. 1981 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի՝Ց ՄԻՆՉԵՎ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԾՆՎԱԾ ԱՆՁՆԱՑ ՀԱՄԱՐ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ...16

8. ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 18

9. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ 19

10 ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄԸ 26

11. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՎՐԱ ՀԱՄՆՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 27

12. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՈՒՄԸ 29

13. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....29

14. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ....31

15. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՎԱԹՂԹԵՐ.....33

1. ՀՀ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՎԵՐՑՎԱԾ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

«Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864 – Ն որոշմամբ ժամանակավոր պաշտպանության տակ են վերցվել՝

1) Լեռնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրի հաշվառումներով անցնող անձինք.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող այն անձինք, որոնց վերջին հաշվառման հասցեն եղել է Լեռնային Ղարաբաղում.

3) այն անձինք, որոնք չեն ունեցել հաշվառում Լեռնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրում, սակայն բնակվել են Լեռնային Ղարաբաղում և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարա-

ության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից:

Ժամանակավոր պաշտպանության տակ վերցված հիշատակված անձինք «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ճանաչվում են փախստական:

ՀՀ կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864 – Ն որոշումը չի տարածվում հիշատակված, բայց այլ պետության քաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ:

2. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ, օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ ՀՀ-ում օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է ՀՀ-ում.

2) կարող է բացատրվել հայերեն լեզվով և

3) ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը:

Առանց 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջների պահպանման՝ ՀՀ քաղաքացիու-

թյուն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը.

1) որը մինչև ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել ՀՀ քաղաքացու հետ և այդ երկու տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվել է ՀՀ-ում կամ ունի ՀՀ քաղաքացի զավակ կամ ծնող.

2) որի ծնողները (կամ նրանցից մեկը) նախկինում ունեցել են ՀՀ քաղաքացիություն, և որը օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին մշտապես բնակվել է ՀՀ-ում.

3) որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից.

4) որը ՀՀ-ում ճանաչվել է փախստական կամ հանդիսանում է ՀՀ-ում բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձ:

Ստացվում է, որ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի

26-ի N 1864 – Ն որոշման ուժով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և փախստականի կարգավիճակ ստացած անձանց վերաբերելի չեն ընդհանուր կարգով ՀՀ քաղաքացիություն ստանալու համար օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես ՀՀ-ում բնակվելու և հայոց լեզվով բացատրվելու՝ «Քաղաքացիություն ստանալու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված պահանջները, և ըստ այդմ՝ սահմանվել է նշված խմբի անձանց համար ՀՀ քաղաքացիություն ստանալու պարզեցված կարգ։

3. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանում է, որ ՀՀ քաղաքացիություն ձեռք է բերվում՝

1) քաղաքացիության ճանաչմամբ.

2) ծննդով.

3) քաղաքացիություն ստանալու միջոցով.

4) քաղաքացիությունը վերականգնելու միջոցով.

5) քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով.

6) ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.

7) ՀՀ քաղաքացիության մասին օրենքով նախատեսված այլ հիմքերով:

4. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացը պարզեցված է: Ավելին, այն անձանց դեպքում, ովքեր ՀՀ կառավարության՝ 2023թ. հոկտեմբերի 26-ի 1864-Ն որոշմամբ սահմանված վավերապայմանների համաձայն հանդիսանում են ժամանակավոր պաշտպանության տակ վերցված (փախստականի կարգավիճակ ստացած) անձ, ՀՀ քաղաքացիության ստացման դիմումների քննարկումը սահմանված 90 (աշխատանքային) օրյա ժամկետի փոխարեն, իրականացվում է հնարավորինս սեղմ ժամկետում:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը.

1) Դիմում-հարցաթերթ (լրացվում է տեղում)[1].

[1] Հարցաթերթիկը լրացվում է հայերենով՝ ընթեռնելի, առանց ուղղումների և ջնջումների: Հարցաթերթիկն ստորագրում են անձը և դիմումն ընդունող պաշտոնատար անձը:

2) Ժամանակավոր պաշտպանություն ստացած անձի վավեր անձնագիր.

3) Ծննդյան վկայականը և դրա պատճեն (եթե օտարալեզու է՝ սահմանված կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ).

4) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).

5) Ամուսնության վկայականը և դրա պատճենը, եթե դիմումատուն փոխել է ազգանունը,

6) Այն դեպքում, երբ դիմումատուն սահմանված կարգով կատարել է անձնական տվյալների փոփոխություն, ապա պահանջվող փաստաթղթերում առկա գրառումների հետ անհամապատասխանության պարագայում ներկայացվում է նաև փոփոխությունը հավաստող փաստաթուղթ,

7) Պետական տուրքի վճարման անդորրագիր (բազային տուրքի չափով՝ 1000 ՀՀ դրամ):

Քաղաքացիության դիմում ներկայացնելիս ժամանակավոր պաշտպանության վկայական ներկայացնելը պարտադիր չէ

Այն դեպքում, երբ Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձը կորցրել է անձնագիրը, ապա այն

վերականգնելու համար վերջինս կարող է դիմել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (ք.Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք, մարզերում՝ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ տարածքային (անձնագրային) ստորաբաժանումներում), ծննդյան վկայականի կորստի դեպքում՝ անհրաժեշտ է դիմել ՔԿԱԳ մարմին (Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին/ЗАГС):

Կորցրած փաստաթղթերը վերականգնելու հնարավորության մասին տե՛ս «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում ներկայացվող՝ «Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման կարգերի վերաբերյալ ուղեցույցը»:

5. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՀ քաղաքացիություն հայցող անձն անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ներկայացնի **անձամբ**, իսկ անգործունակ ճանաչված անձի դեպքում՝ **խնամակալի միջոցով**՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության վարչության (ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք, մարզերում՝ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ տարածքային (անձնագրային) ստորաբաժանումներում), իսկ

օտարերկրյա պետությունում՝ ՀՀ դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ:

ՀՀ քաղաքացիություն ստանում են քաղաքացիություն շնորհելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրով:

6. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

6.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ-ում ծնված երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե

1) ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են.

2) ծնողների քաղաքացիությունն անհայտ է.

3) ծնողներն այլ երկրի (երկրների) քաղաքացիներ են, սակայն չեն կարող իրենց քաղաքացիությունը փոխանցել երեխային՝ իրենց քաղաքացիության երկրի (երկրների) օրենսդրության համաձայն.

4) ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ այլ երկրի քաղաքացի, որը, իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն, չի կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային.

5) ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսի քաղաքացիությունն անհայտ է.

6) ծնողներից մեկի քաղաքացիությունն անհայտ է, իսկ մյուսն այլ երկրի քաղաքացի է, որը, իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն, չի կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային:

Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, իրավունք ունի ձեռք բերելու ՀՀ քաղաքացիություն՝ ծնողների գրավոր համաձայնությամբ:

Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն.

1) եթե նա ծնվել է ՀՀ-ում կամ,

2) եթե ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ

3) եթե բնակվում է ՀՀ-ում, և առկա է ծնողներից մեկի համաձայնությունը:

6.2. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԾՆՈՂՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ՉԵՆ

ՀՀ-ում գտնվող երեխան, որի ծնողներն անհայտ են, ՀՀ քաղաքացի է: Ծնողներից մեկի կամ խնամակալի գտնվելու դեպքում երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

6.3. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած ծնողների երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Եթե ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն.

1) եթե առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, կամ

2) եթե երեխան բնակվում է ՀՀ-ում, և առկա է ծնողներից մեկի համաձայնությունը, կամ

3) եթե ծնողների (ծնողի) համաձայնության բացակայության դեպքում ՀՀ քաղաքացիություն ձեռք

չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա:

Վերոթվարկյալ երեք դեպքում 14-18 տարեկան երեխան ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար տալիս է գրավոր համաձայնություն:

Այն դեպքերում, երբ երեխայի ծնողները կունենան քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ, ապա ազգությամբ հայ երեխան ՀՀ-ում բնակություն հաստատելու (բնակչության պետական ռեգիստրում ՀՀ հասցեով հաշվառվելու) պահից կունենա ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

Տվյալ դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա, որին կցվում է նաև ծնողների գրավոր համաձայնությունը:

6.4. ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը օտարերկրյա քաղաքացի է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե

1) առկա է երեխային որդեգրած ամուսինների համաձայնությունը.

2) երեխան բնակվում է ՀՀ-ում, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող որդեգրած ամուսնու համաձայնությունը.

3) երեխան քաղաքացիություն չունեցող անձ է կամ ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

6.5. ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԾՆՈՂՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՉԵՆ

Ազգությամբ հայ երեխան, որի ծնողները ՀՀ քաղաքացիներ չեն, ՀՀ-ում բնակություն հաստատելու (բնակչության պետական ռեգիստրում ՀՀ հասցեով հաշվառվելու) պահից ունի ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

Սույն դեպքերում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա, որին կցվում է նաև ծնողների գրավոր համաձայնությունը:

6.6. ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ (ԵԹԵ ԾՆՈՂՆԵՐԸ ՄԱՀԱՑԱԾ ԵՆ ԿԱՄ ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ) ԵՐԵԽԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

Առանց ծնողական խնամքի մնացած (եթե ծնողները մահացած են կամ անհետ կորած) երեխայի կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացն ունի որոշակի առանձնահատկություններ: Այս խումբ երեխաների՝ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման հարցը կարող է

լուծվել օրինական ներկայացուցիչ նշանակելու հարցը լուծելուց հետո՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

7. 1981 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի՝ ՄԻՆՉԵՎ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԾՆՎԱԾ ԱՆՁՆԱՅ ՀԱՄԱՐ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1995 թվականի նոյեմբերի 28-ին ուժի մեջ է մտել «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը, որի ուժի մեջ մտնելու պահին գործող խմբագրությամբ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի

Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը»:

Վերոնշյալով պայմանավորված՝ 1981 թվականի նոյեմբերի 28-ից մինչև 1995 թվականի նոյեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում ծնված անձանց դեպքում (այսինքն՝ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին 14 տարին չլրացած անձանց), եթե իրավասու մարմնում առկա չէ անձի քաղաքացիության վերաբերյալ տեղեկատվություն և անհրաժեշտ է պարզել վերջինիս քաղաքացիությունը, ապա լիազոր մարմնի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, օրինակ՝ ծնողների անձը հաստատող փաստաթղթեր, ծնողների ամուսնության կամ հայրության ճանաչման վկայական, միայնակ մայր հանդիսանալու վերաբերյալ տեղեկանք և այլն:

1981 թվականի նոյեմբերի 28-ից մինչև 1995 թվականի նոյեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում ծնված անձանց ՀՀ քաղաքացիություն շնորհելու գործընթացում կարևորվում է ՀՀ քաղաքացիություն հայցող անձի ծնողների՝ ՀՀ քաղաքացի հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքի պարզումը, քանի որ ՀՀ քաղաքացիություն հայցող անձը «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործող խմբագրության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում, կարող է

օրենքի ուժով ձեռք բերած լինել ՀՀ քաղաքացիություն այն դեպքում, երբ 1981 թվականի նոյեմբերի 28-ից մինչև 1995 թվականի նոյեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում ծնողները հանդիսացած կլինեն ՀՀ քաղաքացիներ:

Ներկայացված պահանջը նախատեսված է նաև «Անձի քաղաքացիության վերաբերյալ տեղեկություն ստանալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության՝ 2007 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ:

8. ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անգործունակ անձը, որի խնամակալը ՀՀ քաղաքացի է, կարող է ՀՀ քաղաքացիություն ստանալ առանց «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների (այն է՝ օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է ՀՀ-ում, կարող է բացատրվել հայոց լեզվով և ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը) պահպանման:

Խնամակալի կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ է դիմել խնամակալության և հոգաբարձության մարմին՝ Երևան քաղաքում բնակվող անձինք՝ համապատասխան վարչական

շրջան, իսկ մարզերում բնակվող անձինք՝ մարզպետարաններ:

ՀՀ քաղաքացիություն հայցող անգործունակ ճանաչված անձը խնամակալի միջոցով պետք է փաստաթղթերը ներկայացնի ՀՀ կառավարության լիազոր մարմնին, այն է՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (վարչություն) Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք (ք. Երևան), մարզերում՝ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ տարածքային (անձնագրային) ստորաբաժանումները:

9. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անձինք ՀՀ կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864 – Ն որոշմամբ սահմանված կարգով **չեն վերցվել ժամանակավոր հատուկ պաշտպանության տակ**, ուստի՝ նրանք ՀՀ քաղաքացիություն կարող են ստանալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առանց օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես ՀՀ-ում բնակվելու, հայերեն լեզվով բացատրվելու և ՀՀ Սահմանադրությանը ծանոթ լինելու պահանջների ՀՀ

քաղաքացիություն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայ անձը կամ անգործունակ անձը, որի խնամակալը ՀՀ քաղաքացի է:

Սույն դեպքում անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում-հարցաթերթ.

2) օտարերկրյա պետության կողմից տրված վավեր անձնագիր և դրա պատճենը.

3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).

4) ծննդյան վկայականը և դրա պատճենը.

5) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը.

6) ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթերից որևէ մեկը՝

ա."Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու, քննարկելու կարգը և ժամկետները" հաստատելու մասին ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի 933-Ն որոշման N 4 հավելվածում նշված եկեղեցական կառույցների կողմից տրված մկրտության մասին փաստաթուղթ՝ հաստատված նույն որոշմամբ նախա-

տեսված կարգով, մկրտվածի կամ նրա ծնողի ազգությամբ հայ լինելու մասին նշումով,

բ. օտարերկրյա պետության իրավասու մարմիններին կողմից տրված և ապոստիլով հաստատված կամ հյուպատոսական վավերացմամբ՝ ազգությամբ հայ լինելու մասին փաստաթուղթ,

գ. ծնողի (պապի, տատի, հարազատ քրոջ կամ եղբոր) ծննդյան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, որում առկա է ազգությամբ հայ լինելու վերաբերյալ նշում: Համահայր կամ համամայր եղբոր կամ քրոջ ծննդյան վկայականը կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթն անձի համար կարող է հանդիսանալ ազգությունը հաստատող փաստաթուղթ, եթե եղբոր կամ քրոջ ազգությամբ հայ լինելը պայմանավորված է նրանց համատեղ ծնողի ազգությամբ.

9) 6)-րդ կետի «գ»ենթակետով նախատեսված փաստաթղթերի հետ միասին ներկայացվում է նաև տվյալ անձի ազգակցական կապը հիմնավորող՝ իրավասու պետական մարմինների կողմից տրված փաստաթուղթ:

Ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթեր են համարվում նաև օտարերկրյա պետության կողմից տրված վավեր անձնագիրը և դրա պատճենը. ծննդյան վկայականը և դրա պատճենը. քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը և դրա պատճենը՝ եթե

դրանք պարունակում են ազգությամբ հայ լինելու վերաբերյալ նշում:

եթե առկա է ամուսնություն, և դիմումատուն կրում է ամուսնու ազգանունը՝

10) ամուսնության վկայականը և դրա պատճենը.

11) ամուսնու անձնագրի պատճենը և դրա հայերեն թարգմանությունը.

Սույն դեպքում անձի՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը խնամակալի միջոցով ներկայացվելու դեպքում դիմումին կցվում է նաև խնամակալությունը հաստատող փաստաթուղթը ՀՀ քաղաքացու անձնագիրը:

Պահանջվող փաստաթղթերն օտար լեզվով կազմված լինելու դեպքում դիմումատուն ներկայացնում է նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված և վավերացված հայերեն թարգմանությունները:

Առանց օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես ՀՀ-ում բնակվելու և հայերեն լեզվով բացատրվելու պահանջների ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն **անձը, որը ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը և մինչև ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել ՀՀ քաղաքացու հետ և այդ երկու**

տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվել է ՀՀ կամ ունի ՀՀ քաղաքացի զավակ կամ ծնող:

Սույն դեպքում անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում-հարցաթերթ.

2) օտարերկրյա պետության կողմից տրված վավեր անձնագիր և դրա պատճենը.

3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).

4) ծննդյան վկայականը և դրա պատճենը.

5) ամուսնության վկայականը և դրա պատճենը.

6) ամուսնու անձնագիրը և դրա հայերեն թարգմանությունը.

7) ՀՀ-ում կացության կարգավիճակը կամ օրինական բնակությունը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները.

8) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

ՀՀ քաղաքացի զավակ ունենալու հիմքով ՀՀ քաղաքացիություն ստանալու համար՝

1) դիմում-հարցաթերթ.

2) օտարերկրյա պետության կողմից տրված վավեր անձնագիր և դրա պատճենը.

3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).

4) ծննդյան վկայականը և դրա պատճենը.

5) ամուսնության վկայականը և դրա պատճենը.

6) ամուսնու անձնագիրը և դրա հայերեն թարգմանությունը.

7) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

եթե առկա է ամուսնություն, և դիմումատուն կրում է ամուսնու ազգանունը՝

8) իր զավակի ծննդյան վկայականը և դրա պատճենը և զավակի ՀՀ քաղաքացու անձնագիրը և դրա պատճենը կամ ՀՀ քաղաքացիությունը հավաստող այլ փաստաթուղթ,

9) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

Առանց օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես ՀՀ-ում բնակվելու և հայերեն լեզվով բացատրվելու պահանջների ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող այն **անձը, որը ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը և որի ծնողները (կամ նրանցից մեկը) նախկինում ունեցել են ՀՀ քաղաքացիություն, և որը օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին մշտապես բնակվել է ՀՀ**:

Սույն դեպքում անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում-հարցաթերթ.

2) օտարերկրյա պետության կողմից տրված վավեր անձնագիր և դրա պատճենը.

3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).

4) ծննդյան վկայականը և դրա պատճենը.

5) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

եթե առկա է ամուսնություն, և դիմումատուն կրում է ամուսնու ազգանունը՝

6) ամուսնության վկայականը և դրա պատճենը.

7) ամուսնու անձնագիրը և դրա հայերեն թարգմանությունը.

Սույն դեպքում դիմումատուն ներկայացնում է նաև ծնողի՝ նախկինում ՀՀ քաղաքացիություն ունենալու, ինչպես նաև վերջին մեկ տարում ՀՀ մշտապես բնակվելու փաստը հավաստող փաստաթղթեր՝ լիազոր մարմնում նշված տեղեկատվության բացակայության դեպքում.

Առանց օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես ՀՀ-ում բնակվելու և հայերեն լեզվով բացատրվելու պահանջների ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող այն **անձը, որը ծանոթ է ՀՀ Սահմանդրությանը և 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից:**

Սույն դեպքում անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում-հարցաթերթ.

2) օտարերկրյա պետության կողմից տրված վավեր անձնագիր և դրա պատճենը.

3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).

4) ծննդյան վկայականը և դրա պատճենը.

5) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

եթե առկա է ամուսնություն, և դիմումատուն կրում է ամուսնու ազգանունը՝

6) ամուսնության վկայականը և դրա պատճենը.

7) ամուսնու անձնագիրը և դրա հայերեն թարգմանությունը:

10. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ քաղաքացիություն ձեռքբերելուց հետո ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու գործընթացն **<u>ինքնաշխատ չէ:</u>**

ՀՀ քաղաքացիություն ստացող անձը պետք է մասնակցի ՀՀ կառավարության՝ 2007 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձի երդման

արարողակարգը սահմանելու մասին» որոշմամբ սահմանված կարգով ՀՀ քաղաքացիություն ստանալու համար նախատեսված երդման արարողակարգին և ստորագրի երդման տեքստը: Նույն օրն ընդունվում է նաև անձնագիր ստանալու դիմումը:

Անհրաժեշտ է նկատել, որ անձնագիր ստանալու համար պարտադիր է Բնակչության պետական ռեգիստրում հաշվառում ունենալը, իսկ արական սեռի անձանց դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված է նաև զինվորական հաշվառման կանգնած լինելու պահանջ, որպիսի պայման-ներում հնարավոր չէ ՀՀ քաղաքացիություն ստանալու հետ միաժամանակ տրամադրել ՀՀ քաղաքացու անձնագիր:

11. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՎՐԱ ՀԱՄՆՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ անձի փախստականի կարգավիճակը դադարեցվում է, եթե նա ձեռք է բերել ՀՀ կամ որևէ այլ պետության քաղաքացիություն և օգտվում է այդ պետության պաշտպանությունից: Հետևա-բար՝ ժամանակավոր պաշտպանության տակ վերցված (փախստականի կարգավիճակ ունեցող) անձի կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալու

դեպքում, վերջինիս կողմից 070 ծածկագրով անձնագիրն անվավեր է ճանաչվում, քանի որ, համաձայն «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864 – Ն որոշման, 070 ծածկագրով անձնագիրը հանդիսանում է ժամանակավոր պաշտպանու-թյան տակ վերցված (փախստականի կարգավիճակ ունեցող) անձի՝ անձը հաստատող փաստաթուղթ, իսկ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ անձը դադարում է փախստական ճանաչվել, եթե նա ձեռք է բերել ՀՀ կամ որևէ այլ պետության քաղաքացիություն և օգտվում է այդ պետության պաշտպանությունից: ՀՀ քաղաքացիություն ստանալուց հետո անձը կարող է իրացնել ՀՀ քաղաքացու համար ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված բոլոր իրավունքները, այդ թվում՝ ընտրական և հանրաքվեին մասնակցելու, հանրային ծառայության անցնելու իրավունքները և այլն:

ՀՀ քաղաքացու անձնագիր կրողը գտնվում է ՀՀ հովանավորության ներքո:

12. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՈՒՄԸ

ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է, կամ առկա է հիմնավոր կասկած, որ կարող է վնասել պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին:

ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել

13. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Այն դեպքում, երբ ՀՀ Նախագահի հրամանագրով կմերժվի ներկայացված՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը, ապա ՀՀ վարչական դատարան պարտավորեցման հայց ներկայաց-նելու միջոցով հնարավոր կլինի քննարկման առարկա դարձնել ՀՀ Նախագահի հրամանագրի իրավաչափության հարցը:

Պետք է նկատի ունենալ, որ

- պարտավորեցման հայցը ներառում է նաև ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջ,
- ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում ներգրավված սուբյեկտների, այդ թվում՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից տրվող համապատասխան եզրակացությունների իրավաչափությունը ենթակա է ստուգման վարչական վարույթը եզրափակող վարչական ակտի իրավաչափությունը ստուգելու շրջանակներում,
- ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումի քննարկմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում իրավասու մարմինների կողմից տրվող եզրակացությունները, այդ թվում՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության եզրակացությունը, պարտավորեցման հայցի քննության շրջանակներում օժտված չեն իրավաչափության կանխավարկածով. վերջիններիս իրավաչափությունը ենթակա է դատական վերահսկողության՝ պարտավորեցման հայցում ներառված՝ դիմումը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջի շրջանակներում[2]:

[2] Տե՛ս՝ Փամելա Հաշեմի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԴ/2116/05/20 որոշում

14. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

ՀՀ քաղաքացիություն ստանալու համար ներպետական օրենսդրական կարգավորումները.

- «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը, (06.11.1995թ. ՀՕ-16)
- «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը (27.11.2008թ.ՀՕ-211-Ն)
- «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864 – Ն որոշումը,
- «ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու, քննարկելու կարգը և ժամկետները, ինչպես նաև ազգությամբ հայ լինելը հաստատող մկրտության մասին փաստաթուղթ տրամադրող եկեղեցական կառույցների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 2007 թվականի դեկտեմբերի 22-ի N 1390-Ն որոշումը,
- «ՀՀ քաղաքացու անձնագրում և նույնականացման քարտում անվան և ազգանվան

անգլերեն, ինչպես նաև անվան, ազգանվան և հայրանվան հայերեն ամրագրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության՝ 2017 թվականի հունիսի 23-ի N 725-Ն որոշումը,

- «Անձի քաղաքացիության վերաբերյալ տեղեկություն ստանալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության՝ 2007 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը:
- «ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրությունը և ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշումը:

Հավելյալ տեղեկատվություն հնարավոր է ձեռքերել նաև՝

- Պետական աջակցության ծրագրերի իրազեկման հարթակի՝ «ՀՀ քաղաքացիության տրամադրման պարզեցված ընթացակարգ ԼՂ-ից տեղահանվածների համար» ուղեցույցից,
- ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից տրված պարզաբանումներից,
- ՀՀ ՆԳՆ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կայքէջից,
- Միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային բաժնից, թեժ գիծ՝ +374-10-370264

https://irazekum.am/guide/view/30

https://www.president.am/hy/questions/

https://avv.police.am/hy/citizenship

15. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՎԱԹՂԹԵՐ

ՀՀ քաղաքացիություն առնչվող անհրաժեշտ որոշ ձևաթղթեր կարող եք ներբեռնել ստորև.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմում-հարցաթերթ
2. Քաղաքացիության մասին տեղեկանք տրամադրելու մասին դիմում
3. Հարցում անձի քաղաքացիության մասին տեղեկանք տրամադրելու մասին
4. Տեղեկանք անձի քաղաքացիության մասին
5. Քաղաքացիության մասին տեղեկանքի թարգմանություն